ՊԱՏՃԷՆ

Շրջաբերական կոնդակ բոլոր թեմական Առաջնորդներին (թեմական տեսուչների մասին).

---

**ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.**

*Նախ քան զգուշաբանմն Բ. Կեդրոնական Ժողովոյ որպէս զի ծխական դպրոցք մեր ոչ մնասցին ի խնամս կամայականութեան և անձնական հաճոյից, իբրև զժամանակաւոր կարգադրութիւն, պատուիրեմք հոգաբարձութեանդ, որպէս զընտրեալս ի Ժողովրդականաց համայն թեմի, ի կատար ածել զհետևեալս մինչ ց20-ն յունվարի 1907 ամի.*

*Ա. Տամք իրաւունս հոգաբարձութեանդ ընդ նախագահութեամբ առաջնորդի ընտրել թեմական (շրջանային) տեսուչս յանձանց բարձրագոյն կրթութեամբ ի հոգևորականաց և թէ յաշխարհականաց.*

*Բ. Թողումք ի կամս հոգաբարձութեանդ պարզաբանել, թէ քանի՞ տեսուչք պարտին լինել ի թեմին, մի՞ թէ առաւել.*

*Գ. Ամենայն ծխական դպրոցք և ուսուցիչք լիցին ընդ հսկողութեամբ թեմական տեսչաց ըստ սահմանին*

որ որոշէ ուսուցչական համագումարն, այն է՝ զի նոցա լիցին իրաւունք շրջելոյ ի դպրոցս, հսկելոյ ի վերայ դորձունէութեան և պաշտօնէից, ներկայ լինելոյ դասուց, նստից հոգաբարձական մանկավարժական և խառն ժողովոց առանց ձայնի իրաւանց, ի ժողովս հրաւիրելոյ զհոգաբարձուս և զուսուցիչս, պահանջելոյ զկարևոր բացատրութիւնս ի նոցանէ, յորդորելոյ բանալ դպրոցս, տալ տեղեկագիրս ուսումնարանաց ուսումնական խորհրդոյն, իսկ զանտեսականէն հոգաբարձութեանց թեմական դպրոցին։

Դ. Զընտրեալ թեմական տեսուչս ընդ արձանագրութեամբ հոգաբարձական ժողովոյն առաջի առնել մեզ ի հաստատութիւն։

Ե. Զնիւթական ապահովումն թեմական տեսչաց յանձնեմք ամբողջութեամբ ի կարգադրութիւն հոգաբարձական ժողովոյն, զորպիսին ունի հոգալ ի միջի այլոց և յարդեանց դպրոցաց և եկեղեցեաց։

Զ. Թեմական տեսուչք ենթարկին ուսումնական խորհրդոյն Էջմիածնի, ընդ որում մտանեն ի յարաբերութիւնս վասն ամենատեսակ ուսումնարանական գործոց։

Է. Զանուանս ընտրեալ ուսուցչաց և աւագ ուսուցչաց թեմական տեսուչք առաքեն հաստատութիւն առաջնորդաց և տան տեղեկութիւնս ուսումնական խորհրդոյն։

Ը. Ուսումնական խորհուրդն, որ Էջմիածին՝ կազմի յերից անձանց՝ ի միոյ նախագահէ և յերկուց անդամոց. զնախագահն կարգեմք Մեք, զմին անդամոց ընտրէ ուսուցչական ժողով ճեմարանի Մ. Աթոռոյս, և զմիւս անդամն ընտրէ թեմական հոգաբարձութիւն Ներսիսեան դպրոցի ի խառն ժողովի, որ կազմեսցի ըստ հրաւիրման թեմ. առաջնորդի յուսուցչաց նոյն դպրանոցին և յաւագ ուսուցչաց ամենայն ծխական դպրոցաց Տփխիս քաղաքի։ Յետ հաստատման անդամոց ուսումնական խորհրդոյն՝ նոքա ժողովեսցին Էջմիածին և սկսանիցին զգործառնութիւն իւրեանց։ Սահմանք պարտուց նոցա

պարտին լինել ըստ որոշմանց ուսուցչական համագումարի, այն է վերահսկողութիւն ամենայն դպրոցաց, վախճանական քննութիւն ամենայն գործոց դպրոցաց և պաշտօնէից. մշակումն նախագծից դպրոցական կանոնադրութեան և բարեփոխութեան ծրագրի, պատրաստումն ընդհանուր տեղեկագրի ի վերայ հիման տեղեկագրոց թեմական տեսչաց, ընտրութիւն դասագրոց և նպաստումն հրատարակութեան նոցին, զհետ լինել պատրաստելոյ զուսուցիչս ի մանկավարժական դիտելիս, կազմումն և կառավարելն դպրոցական ֆոնդի, գումարումն ուսուցչական ժողովոյ առ նուազն միանգամ յընթացս չորից ամաց։

Թ. Ցկազմումն Ուսումնական խորհրդոյն ամենայն գրագրութիւնք զուսումնարանաց ունին գումարել ի Դիւան Մեր.

Ժ. Քանզի չիք թեմական դպրանոց ի թեմին Շամախւոյ, ուստի և յանձն առնեմք առաջնորդի Շամախւոյ ընդ իւրով կամ նախագահութեամբ գործակալին Բագուայ տալ վճռել զվերոյիշեալ Թ. յօդուածս կոնդակիս մասնակցութեամբ Խառն ժողովոյն կազմելոյն յուսուցչաց և ի հոգևորականաց երկսեռ դպրոցաց Բագու քաղաքի։

27 դեկտ. 1906 ամի
ի Ս. Էջմիածին
Թ. 1738—43

## ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . . .

*Գերաշնորհ Տէր Գէորգ Արքեպիսկոպոսի նախանդամի Սինոդի և Տեղապահի մերոյ հարազատի Մայր Աթոռոյս Հայրապետական օրհնութեամբ յայտ առնեմք։*

*Վասն տալոյ մի օրինակ ընթացս գործոց Դիւանատան Մերոյ և Սինոդի Ս. Էջմիածնի, այսու կոնդակաւ Մերով պատուեմք Գերաշնորհութեան Ձերում գամ մի յիւրաքանչիւր եօթնեկի՝ յաւուրս հինգշաբաթի, ի միասին ընդ միւս անդամս Սինոդի յաճախել ի Դիւանատուն Մեր ի խորհրդածութիւն ընդ Դիւանապետի յաղագս կարևոր խնդրոց և գործոց. իսկ ի դէպս արտաքոյ կարգի և անյետաձգելի խնդրոց ունիմ հրաւիրել ի ձեռն Ձերդ Սրբազնութեան զնոսա ի ժողով և յայլ աւուրս շաբաթու։*

յ8 դեկտ. 1906 ամի
ի Ս. Էջմիածին
թ. 1647

---

## ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . . .

### Սինոդի Սրբոյ Էջմիածնի.

*Ի նկատ առեալ մեր զանձուկ վիճակ Մայր Աթոռոյս, զպարտիս հաստատութեանց նորա ց30,000 ռուբլիս նաև զհատուցանելիս նպաստամատոյց ծանձնաժողովոյն զ20,000 ռուբլիս, հարկ անհրաժեշտ համարիմք առնել զհետևեալ կարևոր փոփոխութիւնս։*

Ա. Բառնալ զսեղանատուն, զփուռն, զմառանատուն, զխոհանոցն ի 16-էն յունվարի, արձակելով ի նոյն ժամանակէ զամենայն ծառայս, որք են ի դոյն հաստատութիւնս տալով նոցա յամսոյ յամիս զռոճիկս յունուար, փետրուար և մարտ ամսոյ։ Մեն մի միաբանի ի փոխարէն սննդեան տալ ի սկզբան իւրաքանչիւր ամսոյ սննդադրամ զքսանական ռուբլիս և յայնմ հետէ ճեմարանն ընկալցի ալիւր, զոր ունի պատրաստել ի փռատուն վանուցս միջոցով իւրովք հաց ի պէտս աշակերտաց. Աշակերտք, որք բնակին ի հիւրատան Մայր Աթոռոյս, ունին ստանալ ճաշ ի սեղանոյ ճեմարանի մինչ ցմին մայիսի յառաջիկայ 1907 ամի։ Վանական Կառավարութիւն ստուգելով զցուցակս «թային» ստացողաց և որք կարօտ են հացի և կերակրոյ, տայ նոցա գրամական նպաստս։

Բ. Զագարակն բարեկարգել այսպէս. թողուլ զ12 ձիս վասն կառաց, սայլի և հեծանելոյ. վասն գութանի 8 գոմէշս և 4 եզինս և երիս կաթնատու կովս վասն Վեհարանի մի միայն, իսկ զմնացեալ անասունս ի վաճառ հանել ի մարտ ամսոջ։ Ունել զ3 ծառայս և զ3 կառապանս։

Գ. Վասն ճեմարանի սահմանեմք՝ սկսեալ ի 1907 ամէ ունել որդեգիրս մի միայն 100 թարց որդեգիր—թոշակաւորաց, որք խնամին նպաստիւք բարերարաց, իսկ մնացեալ աշակերտք լիցին երթևեկք։ Կարգ և ձև ընդունելութեան երթևեկաց և որդեգրաց թողումք ի վերայ մանկավարժական ժողովոյն ճեմարանի, որ պարտի տալ ի տնօրինութիւն Մեր զտեղեկագիր մինչ ց1-ն ապրիլի առաջիկայ ամի։

Դ. Տալ զտպարանն կապալաւ այլում ցանկացողի և պատուիրել Մխիթար վարդապետի որոնել կապալառու և ի ձեռն Սինոդիդ կռել պայմանս ընդ նմա։ Ցեսա տուչութեան տպարանին ի վարձու դգրեանս գտեալս անդ մանրամասն ցուցակաւ յանձնել միւսմ ի միաբանից պահել յապահով տեղւոջ վասն ի վաճառ հանելոյ ցանկացողաց։

Ե. Պատուիրել Վանական Կառավարութեան նախ՝ զկնի փակման սեղանոյ և պարագայիցն ի վաճառ հանել զպատրաստի նիւթեղէնս ի վերայ միաբանից, իսկ ի դէպս ոչ ցանկալոյ նոցա ի վերայ այլ ցանկացողաց, երկրորդ՝ կազմել մանրամասն ցուցակս ամենատեսակ անօթոց, գործեաց, կահ կարասեաց սեղանատան, փռատան և մառանատան և պահել անկորուստ ընդ հսկողութեամբ Վանական Կառավարութեան։ Իսկ վասն շտեմարանին անօրինել զարժանն։

Զ. Հիւրոց ի հիւրատան տալ մի միայն ինքնաեռ, սենեակ և ծառայ. պատուիրել հիւրընկալին առաջի առնել ց-5 յունուարի մանրամասն ցուցակ կահկարասեաց, սպիտակեղինաց և անկողնոյ ի հայեցողութիւն Սինոդի։

Է. Վասն աննդեան Վեհարանի վարիլ ըստ վերոյիշեալոյն. այն է կարճել զտուչութիւն նիւթեղինաց և տալ աննդադրամ ըստ վերոյգրեալ չափու առանձին հաշուեմատեանիւ, որ ատուգեսցի յամսոյ յամիս ի Սինոդի ընդ այլ մատեանս վանական հաստատութեանց։

Ը. Վասն աննդեան Տաճարի ծառայողաց վարիլ ըստ վերոյիշեալոյն, տալով մատեան առանձին Տաճարին, յոր մտցի հաշիւ մոմավաճառութեան, գանձանակի, նուիրադրամոց թանգարանի և աննդադրամոց, որպիսի մատեան ատուգեսցի ի Սինոդին ընդ այլ մատեանս յամսոյ յամիս։

Ի 27 դեկտեմբերի 1906 ամի
և ըստ տոմարիս ՌՅԾԶ
ի Հայրապետութեան մերում ԺԴ. ամի
Այրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
թ. 1734.